Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«18» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2012 Թ. N 188-Ա ՀՐԱՄԱՆԻՑ

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1917-Ն որոշման N 1 հավելվածի 12-րդ կետի դ) ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Ծառայողական քննություն նշանակելու և անցկացնելու կարգը հաստատելու մասին» N ՔՀ-46-Ն հրամանը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության պետ Ն. Փանոսյանի զեկուցագիրը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում նշանակել ծառայողական քննություն:

2. Ծառայողական քննության անցկացման իրավասությունը վերապահել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչությանը (տեսչության պետ՝ Ն. Փանոսյան):

3. Ծառայողական քննության անցկացման աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության պետի տեղակալ Միքայել Մինասյանին և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի աշխատողներ Ռոման Սմբատյանին և Լևոն Թումասյանին:

4. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետ Հ. Հարությունյանին՝ քրեակատարողական վարչությունից ծառայողական քննության անցկացման աշխատանքներին մասնակից դարձնել երկու քրեակատարողական ծառայողի:

5. Ծառայողական քննության ժամանակահատվածում ժամանակավորապես դադարեցնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պետ Արամ Խաչատրյանի լիազորությունները:

6. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պետի պարտականությունների ժամանակավոր կատարումը դնել Հայաստանի

Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալ Արտուշ Չոբանյանի վրա:

7. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պետի ժամանակավոր պաշտոնակատար Արտուշ Չոբանյանին՝ ծառայողական քննության անցկացման ընթացքում աջակցել ծառայողական քննության աշխատանքներն իրականացնող աշխատողներին անհրաժեշտ փաստաթղթերի և իրերի տրամադրման հարցում:

8. Ծառայողական քննության կազմակերպման և անցկացման պատասխանատվությունը դնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության պետ Ն. Փանոսյանի վրա:

9. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության պետ Ն. Փանոսյանին՝ ծառայողական քննության արդյունքների մասին 1-ամսյա ժամկետում զեկուցել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին:

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ